«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուի դասավանդման ընթացքում**

ՀԵՂԻՆԱԿ **Մարիամ Բաբկենի Սանեյան**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

1.Ներածություն…… էջ 3

2. Արժեհամակարգի, նրա ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնների մասին…… էջ 4

3. Արժեքային համակարգը և հայ գրականությունը ……էջ 7

4. Դանիել Վարուժան մանկավարժը……էջ 9

5 .Ի՞նչ արժեքներ է ձևավորում «Հացին երգը» ժողովածուն……էջ 11

6. Եզրակացություն. . . . . էջ 14

Ներածություն

Հետազոտական աշխատանքը կրում է «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուի դասավանդման ընթացքում» վերնագիրը։ Թեման ընտրելիս հաշվի եմ առել նրա արդիականությունը՝ հայրենիքին արժանի բարոյական, ազգային և ավանդական արժեքներ կրող սերունդ ունենալու տեսանկյունից։ Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենք կրթության բովանդակության բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։ Իսկ մեր օրերում հատկապես հրատապ է սովորողի արժեքային համակարգի ձևավորման և զարգացման հարցը ազգային մշակույթի և ազգային արժեքների պահպանման համատեքստում։

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների , տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա սերունդը։ Իսկ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները։ Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև։ Անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով։ Արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից քաղաքական-տնտեսական ու շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն և հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը։Այդօրինակ իրավիճակներում անփոխարինելի է դպրոցի դերակատարությունը ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում, որի շնորհիվ ապահովվում է մտավոր ներուժով հարուստ

սերունդ ունենալու , ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը:

Արժեհամակարգի, նրա ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնների մասին

Արժեհամակարգը մարդու բարոյական,գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է , որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն բոլոր ներառված համախմբերի փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման գործում ամենակարևոր դերը զբաղեցնում է դպրոցը: Մասնավորապես անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը կայուն և ներդաշնակ արժեհամակարգ ունեցող անձ կերտելու գործում: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության , նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում : Իսկ այդ գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:
Այսօր մատաղ սերնդի դաստիարակության վրա ազդում են մի շարք գործոններ՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Այդ իսկ պատճառով ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համաշխարհային արժեքները: Կրթական տարբեր աստիճաններում աշակերտներն ունենում են աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, առավել ևս համացանցը ներգործում են անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական

և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի տարիքը ևս կարևոր գործոն է արժեքների ձևավորման համար:Ելնելով աշակերտների տարիքային առանձնահատկություններից՝ մանկավարժը պետք է կարողանա նրանց մեջ ձևավորել կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք, սովորեցնել արժևորել ապրած յուրաքանչյուր օրն ու պահը : Կյանքի ընթացքում տարբեր մարդկանց հետ փոխհարաբերությունները ևս իրենց ազդեցությունն են ունենում անձի ձևավորման վրա: Այդ տեսանկյունից ճիշտ է նշել, որ ուսուցիչը ևս իր կերպարով կարող է արժեքներ ձևավորել :Միջանձնային հարաբերությունները աշակերտի մոտ կարող են ձևավորել թե՛ դրական, թե՛ բացասական դրսևորումներ: Ընդ որում, հատկապես դեռահասության տարիքում, աշակերտները հակված են ավելի շատ բացասական դրսևորումների: Այստեղ հարկ է նշել ուսուցչի ճիշտ և տեղին միջամտության մասին: Ուսումնական հաստատությունը, ուսումնադաստիարակչական գործընթացը ամենակարևոր դերն են կատարում աշակերտների արժեքների ձևավորման գործում: Ուսուցիչները առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով կարողնում են աշակերտների մեջ սերմանել իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ևս ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Այս առումով նորից պետք է նշել , որ նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում կարևոր առաքելությունը վերապահված է դպրոցին, որն էլ կարողանում է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված , ազգային նկարագիր ունեցող սերունդ: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Նման ստեղծագործություններում արտահայտված

են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները։ Հայ ժողովրդի ավանդույթներում վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը։ Այս ամենն է անհրաժեշտ դասավանդել ժամանակակից սերնդին։ Այսպես նա պիտի հասնի այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների մակարդակով ու մշակույթի ո՛չ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ։ Այս սերունդը պետք է կարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները։ Անձի հեգեաշխարհի վրա ազդող և այն հարստացնող կարևորագույն գործոն է գրականությունը,որը բացահայտում է մարդու հոգևոր կյանքի հակասություններն ու ելևէջները, հույզերն ու զգացմունքները։ «Գրականությունն ունի ճանաչողական,հոգևոր-բարոյական մեծ արժեք։ Գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, հոգևոր ուղիներ բացում նրա համար ինքնակատարելագործվելու, հաղթահարելու դժվարությունները»։[1]

---

[1].Ա. Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում», Երևան, 2002, 176 էջ։

Արժեքային համակարգը և հայ գրականությունը

Ինչպե՞ս է ձևավորվում արժեքային համակարգը գրականության դասերին։ Գրականությունը յուրաքանչյուր դպրոց ավարտողի մեջ պետք է ձևավորի՝

1.Հայոց լեզուն և գրականությունը ճանաչելու, սիրելու, ուսումնասիրելու ձգտում, հայոց լեզվի և գրականության՝ որպես ազգային ինքնության գրավականի գնահատում։

2.Իր նախնիների հոգևոր մշակույթի գնահատում։

3.Գրական երկի ազդեցությամբ ինչպես ինքնաճանաչման, այնպես և դիմացինին հասկանալու, արժևորելու ձգտում, նրբանկատություն, նրբազգացություն, մարդկանց օգնության ձեռք մեկնելու պատրաստակամություն։

4.Համագործակցության կարողություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի տեսակետի նկատմամբ։

5.Անաչառ ինքնագնահատում , սեփական անձի, ինքնության գիտակցում և արժանապատիվ կեցվածք։

6.Ինքնադաստիարակության ձգտում՝ գրական երկում արծարծված հիմնական գաղափարին հաղորդակից լինելու, դրական օրինակին հետևելու ճանապարհով։

7.Գրական-գեղարվեստական ճաշակ, գեղարվեստական խոսքով հաղորդվող հույզերի և զգացմունքների ընկալում։

Այսինք՝ գրականությունը նպաստում է անհատի հոգևոր և մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը։ «Գրական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանում է մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ»[2] ։

---

[2]Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափոշիչներ և ծրագրեր. «Հայոց լեզու», «Գրականություն», 3.11.2007 թ.

Այսպիսով՝ «Մայրենի լեզվի և գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները։ Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում»։[3]

---

[3]Փորձնական չափորոշիչ և ծրագրեր «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաների 1-12-րդ դասարաններ, 30.04.21թ.

Դանիել Վարուժան մանկավարժը

Որպեսզի ավելի ակնառու լինի Դանիել Վարուժանի «Հացին երգը» ժողովածուի կարևոր դերն ու նշանակությունը հայ գրականության համար, ու թե ինչպիսի արժեհամակարգ է ձևավորում այս գրողն ու նրա ստեղծագործությունը, եկեք ծանոթանանք Դանիել Վարուժան մանկավարժի հետ։

Վարուժանի գլխավոր զբաղումը եղել է մանկավարժությունը։ Աշխատանքային կյանքի բոլոր տարիներին ու օրերին, առանց բացառության, նա աշխատել է դպրոցում։ Ժամանակի մամուլը և հետագայում լույս տեսած հուշագրությունները բազմաթիվ տեղեկություններ են պահպանում Վարուժանի մանկավարժական գործունեությունից։ Սեբաստիայում, Եվդոկիայում և Պոլսում նրան աշակերտած անձիք պատմում են իրենց ուսուցչի մասին ՝ բացահայտելով նրա հմայքի պատճառները՝ խոր գիտելիքներ, պատասխանատվության զգացում, սեր ու նվիրվածություն, ուսուցանելու և դաստիարակելու նպատակ ու ձգտում, խոսելու, պատմելու, համոզելու արվեստ։ Հայրենասեր բանաստեղծը աշակերտների մեջ արթնացնում էր ժողովրդին անձնվեր ծառայելու ոգի, սեր մայրենի լեզվի և գրականության հանդեպ։ Իր ժողովրդի զավակներին ազգային կրթություն տալու, հայրենասիրությամբ դաստիարակելու ներքին համոզում-ձգտումն էր ստիպում Վարուժանին հրապարակային ելույթներ ունենալ բոլոր այն մարդկանց հետ, ովքեր փորձում էին «մայրենի լեզվին դերը փոքրացնել», ովքեր օտարամոլությամբ էին տառապում։ Մայրենի լեզվով ազգային կրթությունը պարտադիր ու անհրաժեշտ էր համարում Վարուժանը։ Գտնում, որ առաջնային է մատաղ սերնդի ազգային-հայրենասիրական դաստիարակությունը։ Վարուժանը աշակերտներին համեմատում էր արտի հետ, որի վրա թափված քրտինքի, հոգատարության, սրտացավության չափով է որոշվում հունձքի առատությունը։ Վարուժանը կարևոր խորհուրդներ էր տալիս իր սաներին։ Հորդորում էր ունենալ աննկուն կամք կյանքի պայքարի մեջ, չհուսալքվել դժվարություններից, որոնք այնքան չատ են կյանքում։

Կյանքի պայքարից կամ հաղթանակով ելնել, կամ քաջաբար ընկնել։ Խոսուն են հատկապես շրջանավարտներին տված նրա խորհուրդները. «Հաջողությունը դուք անձամբ այսուհետև պիտի գտնեք։Մենք անոր ճամփան միայն սովրեցուցինք։ Ձեզի տվինք երեք ոսկե բանալիներ հաջողության երեք դռներ բանալու համար»։ Ապա Վարուժանը մատնացույց է անում այդ երեք դռները։ «Առաջինը Երազի և սրբության դուռն է՝ ուրկե կըմտնեք ընտանեկան օջախը»։ Ընտանիքը սրբություն է, որին պիտի ծառայի ամեն ոք։ Ընտանիքը պետք է պահպանել և նոր ընտանիք կազմել։ Եվ լավ է, եթե ամեն ոք կարենա ընտանիքի համար «իր հոր ըրածեն բան մը ավելի ընել»։ Հետաքրքիր է, որ նոր սերնդին Վարուժանը ամենից առաջ մատնացույց էր անում ընտանիքը՝ մեր ժողովրդի ազգապահպանման կարևոր հիմքը։ Սիրով ամուր է ընտանիքը, ուրեմն կարելի է հասնել ազգային միասնության։ Այդ սիրո ամրությամբ է որոշվում «ընտանիքներեն ծագում առնող և հայրենիքը ամրապնդող» նվիրման պատվանդանի ամրությունը»[4]։ Երկրորդ դուռը ընտանիքից հետո Վարուժանը համարում էր բուն կյանքը, ուր մարդիկ «օրն ի բուն կգոտեմարտին, հացին համար հավիտենական կռիվը կը մղեն»։

Բայց Վարուժանի համար վերջին խորհուրդը ամենակարևորն էր։ Երրորդ դուռը, որի ոսկեղեն բանալու կռելուն շատ էր նպաստել մանկավարժ Վարուժանը, հայրենիքի «արյունլվա ու լալաճռինչ դուռն էր», որը բացելով պիտի մտնեին «հայրենի երկիրը՝ փշաստան և բուրաստան»։ Ուշադրություն դարձնենք այս հակասական որակումին՝ և՛ փշաստան, և՛ բուրաստան։ Քաղցր է հայրենիքը, բայց և ծանր է նրա վիճակը։ Ինչքա՜ն նվիրում ու սեր է անհրաժեշտ։ Այդ սերն ու նվիրումն էր պահանջում Վարուժանը իր սաներից՝ հավատալով, որ նրանք ներս կմտնեն «լալաճռինչ» դռնից հենց այդ սիրով ու գիտակցությամբ, «այս ավեր ու ավերակ երկրին ճակատագիրը դարբնելու համար իրենց մտածումը մուրճ կընեն ու իրենց լուսավոր ճակատը սալ անխորտակելի»[4]։

Ուսուցչության իր բոլոր տարիներին արվեստագետ-բանաստեղծ Վարուժանի ուշադրության կենտրոնում է եղել աշակերտների գեղարվեստական դաստիարակության խնդիրը։ Հայրենասիրության, մարդասիրության զգացումների հետ բանաստեղծը ձգտում էր ներարկել իր սաների մեջ գեղեցիկի զգացումը,

սովորեցնում էր արվեստի երկերը հասկանալու գաղտնիքները, սեր էր արթնացնում արվեստի գործերի նկատմամբ։

---

[4]Վ.Գաբրիելյան, Դանիել Վարուժան, Երևան, 1978, էջ 349։

Այսպիսով՝ Վարուժանի նպատակն էր դաստիարակել մի սերունդ, որ նվիրված լինի ընտանիքին, մարդուն, հայրենիքին։ Մանկավարժությունը նրա պոետական ծրագրի մի մասն էր։ Նա մանուկ ու պատանի սերնդին ասում էր այն, ինչ դնում էր իր բանաստեղծությունների հիմքում՝ ապագա հայության մասին ունեցած իր երազանքը։ Եվ հաջողության էր հասնում երկուստեք, քանզի երկու դեպքում էլ անկեղծ էր, նվիրված ու տաղանդաշատ։

Ի՞նչ արժեքներ է ձևավորում «Հացին երգը» ժողովածուն

«Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում։ Ուսուցիչը ուսուցման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրները»[5]։

Արևմտահայ բանաստեղծ Դանիել Վարուժանը իր անուրանալի դերն ունի հայ գրականության պատմության մեջ։ Նրա գլուխգործոցը «Հացին երգը» ժողովածուն է, որի յուրաքանչյուր բանաստեղծություն բերկրանքով է լցնում ընթերցողի հոգին, տանում է շրջելու մեր պապերի, մեծ հայրերի հեռվում մնացած ժամանակները, ականատես լինելու նրանց անվերադարձ կորցրած գյուղաշխարհի , այնտեղ թողած աշխատանքի, կորսված հայրենիքի պատկերներին։

Վերևում մենք խոսեցինք մանկավարժ Վարուժանի մասին, տեսանք, թե ինչպիսի գաղափարների կրող էր նա, ինչ նպատակներ էր հետապնդում ու ինչպես էր հետամուտ լինում դրանց իրականացմանը։

---

[5]Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987 թ., էջ 112։

Ամեն բանաստեղծ մի նպատակ-բաղձանք է ունենում։ Դեռ 1908-ին Վարուժանը հայտնեց այն. «Բաղձանքս է ապագայի մարդերուն նվիրել այնպիսի հզոր երգ մը, որ հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալուն զոնե չզղջա»։ Եվ այդ երգը «Հացին երգը» ժողովածուն էր։ Բանվորական կյանքը և հեթանոս դարերը երգող բանաստեղծը հանկարծ փոխում է իր թեման ու բերում է նոր աշխարհ՝ գյուղական կյանքն իր աշխատանքային առօրյայով՝ թաթախված հողի աշխատավորի՝ դեպի իր աշխատանքն ունեցած անպարագիծ սիրով։ Վարուժանի նպատակը հայ մշակի աշխատանքի հաճույքն ու դրանից ստացած հոգեկան բավարարվածությունը ներկայացնելն է։ Երբ աշխատանքը սիրով է արվում, այնտեղ առկա է աստվածային սերն առ հողը, ծնողները, հայրենիքը, սիրած աղջիկը։ Սա իրոք վայելք է, որը զգացված է յուրաքանչյուր բանաստեղծության մեջ։ Իրականությունից դժգոհ բանաստեղծը հոգեկան բավականություն է ստանում իր կերտած աշխարհում, ուր մարդն իրեն զգում է դրա տերը, վայելում իր աշխատանքի հաճույքը։Բանաստեղծն ստեղծել է գունագեղ պատկերների մի խճանկար՝ մշակի աշխատանքը գարնանից մինչև ուշ աշուն ներկայացնող։ Գեղանկարչի ներկապնակի տարբեր նրբերանգներով են ներկայացված այս պատկերները, մի հայացքով կարելի ընդգրկել այս սրբալույս ճանապարհը, որը մեկ այլ ձևով հացի արարման պատմություն է կոչվում։
Երջանիկ է մշակը, սիրով է աշխատում , այդ աշխատանքը փոխանցվում է շրջապատին։ Լայն է սերմանողի բուռը, ձեռքի շարժումը՝ անպարագիծ։ Աշխատում է նա բոլորի համար՝ և՛ անօթևանների, և՛ աղքատների, և՛ տնանկների։ Այո՛, աստվածահաճո է այս գործը, և եթե նույնիսկ թռչունները տանեն այդ սերմերը հողից, արարիչն այնտեղ մարգարիտներ կսերմանի։
Աստված սեր է, այդ սիրով ողջ բնությունը դառնում է տիեզերական մեկ ամբողջություն, որին տենչում էր Նարեկացու հոգին։ Այս ժողովածուով Վարուժանը մեզ՝ հողից հեռու ապրողներիս, մոտեցնում է հողին, սիրել տալիս այն, գնահատել

հողի աշխատավորին, ճանաչել հողի աշխատանքը, իմանալ հացի արարման պատմությունը։ Հողի աշխատանքի պոեզիան, հացի ստեղծման սուրբ գործի փառաբանումը իր խորքում հայրենի հողն ու աշատանքը սիրել տալու միտումն ունեին։ Դա մի յուրօրինակ կանչ էր, ուղղված նրանց, ովքեր թողել էին գյուղը և ցրվել մեծ քաղաքներում, աշխարհով մեկ։

«Առաջին ծիլեր» բանաստեղծության մեջ տեսնում ենք հողի մշակի աշխատանքի արդյունքը, որը խինդով է լցում այն արարողի հոգին։ Մեն մի ծիլն արդեն մեծ աշխարհ է իր համար, կյանք է ու սեր, հույս է ու խիղճ, համբերանք է ու հաղթանակ։ Նույնիսկ արտերի վրա տեղացող անձրևն է լուսաշող, արևային, պայծառ։

«Ցորյանի ծովեր» բանաստեղծությունը հայ գյուղացու աշխատանքի արգասիքն է, հողի պարգևը։ Մշակը գոհ է իր աշխատանքից, ծփացող ծովի պես իրեն դիմավորում է արտերի ոսկին։ «Ցորյանների» հետ խոսում է, անձնավորում, նույնիսկ արթնացնում «հուշիկ-հուշիկ»։ Բերքն այնքան առատ է, արգավանդ, հողի ծոցից ելած դաշտն այնքան հուռթի է, որ նույնիսկ այնտեղ արածող ուլը կարող է խեղդվել։ Համեմատությունը թվում է չափազանցված, բայց դա բանաստեղծի հոգու ուրախությունից է գալիս, հայ գեղջուկի աշխատանքի բարձր գնահատանքից։ Մշակը կարող է անվերջ աշխատել, հոգու թախիծն ու տրտմությունը փարատել հենց այդ աշխատանքով։ Սա է ողջ շարքի ներքին միտումն ու խորհուրդը։

«Սայլերը» բանաստեղծության մեջ տեսնում ենք գյուղամիջյան ճանապաւհը, որը ողողված է արևով, լույսով, հրդեհով։ Սայլերը բերք, բարիք, սեր ու խինդ են բերում գյուղ։ Ոչինչ, որ այդ ամենը ստեղծվել է չարչարանքով, քրտինքով։

Կը տանին հեղեղն ահա լեռնացած

Քրտինքի, Հույսի

Որ լուծեն մինչև անիվներուն վրա

Առատ կը հոսի («Սայլերը», էջ 339)

Ուրախ են բոլորը, ամենուրեք թևածում է երգը, երգը աշխատանքի, արարման, կյանքի։ Վաստակած մարդու ուրախությունն է ներկայացված «Կալեր» բանաստեղծության մեջ։ Մի՞թե ավելի մեծ ուրախություն կա հողի մշակի համար, քան իր աշխատանքի արդյունքը տեսնելն ու վայելելը ։

Հրաշք պատկերներ կան «Կալեր» բանաստեղծության մեջ։ Մեծ ափսոսանք ես զգում, որ այսօրվա պատանին դժվարությամբ է ընկալելու այս պատկերների գեղեցկությունը։

Կալերուն մեջ դեզը՝ ծեփված արևով՝
Կարծես տընակ մ'է ոսկի
Տերևախիտ ծառին զով շուքը կ'ըլլա
Առագաստ մը նոր հարսի։

Ի՜նչ նրբությամբ է միահյուսել բանաստեղծը տերևախիտ ծառի շուքը, տնակի ոսկին և նորահարսի առագաստը։ Կարդում ես ու խորհում կյանքի երջանկության մասին, որ աստվածային պարգև է, ու մշակը աշխատանքով, սիրով, վաստակով իր գոհությունն է հայտնում աստծուն ։

Շարքում երևում են ոչ միայն բնության հրաշք պատկերներ, այլև լսվում են բնության չքնաղ ձայները՝ ձուլված կալվորի, երան անող հարս ու աղջիկների, դաշտից տուն դարձող մշակների ձայներին ։ Գյուղի, գյուղաշխարհի նկատմամբ անպարագիծ սեր ունի Դանիել Վարուժանը և կարողանում է այդ սերը փոխանցել , անաղարտորեն ներկայացնել ու մեր մեջ ձևավորել այդ ամենը սիրելու ու արժևորելու կարողություններ։

Ողջ շարքն ուղեկցում է ժողովրդական երգերին բնորոշ գծերից մեկը՝ մարդասիրությունը՝ անձնականից դեպի ուրիշները ձգվող սեր, մարդկայինից դեպի համամարդկայինը թևածող երազներ և իդեալներ։

Անվերջ կարելի է խոսել ժողովածուի արժեքների մասին։ Այն բանաստեղծի խիզախումն էր արվեստի մեջ, որը ձևավորում է սեր առ հայրենիք, հող ու բնություն, ընտանիք ու մարդկություն, գյուղ ու գյուղաշխարհ, հաճույք ու բերկրանք աշխատանքի ու դրա պտուղների։ Եվ պատահական չէ, որ ժողովածուն ընդգրկված է 11-րդ դասարանի ուսումնական ծրագրում։ Այս տարիքի աշակերտը ավելի գիտակից է, պատասխանատու, արագ է արձագանքում նորարարություններին։ Այս տարիքում է անհրաժեշտ ձևավորել որոշ արժեքներ, կոփել ուժեղ կամքով, աշխատասեր անհատներ, սիրել տալ հողն ու բնությունը, զգալ աշխատանքի հաճույքը, ներշնչվել գեղեցիկով ու ապրել՝ գեղեցիկով։

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացի մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության և այլ արժեքային որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է այն պատճառով, որ արժեքային համակարգի հենքի վրա ձևավորված գործողությունները ճանաչելի են և ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային, համընդհանուր սկզբունքներից և օրենքներից: Ազգի հիմքը կրթությունն է, և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան հենց կրթության միջոցով է փոխանցվում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է:

Մանկավարժ Վարուժանը սեփական օրինակով էր դաստիարակում իր սաներին, իսկ նրա ստեղծագործությունը դեռ կրթելու է բազում սերունդներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում», Երևան, 2002:

2. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափոշիչներ և ծրագրեր. «Հայոց լեզու», «Գրականություն», 3.11.2007 թ.

3. Փորձնական չափորոշիչ և ծրագրեր «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայ գրականություն» առարկաների 1-12-րդ դասարաններ, 30.04.21թ.

4. Վ.Գաբրիելյան, Դանիել Վարուժան, Երևան, 1978:

5. Յու. Բաբանսկի, Աշակերտների դաստիարակության կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987:

6. Դ.Վարուժան, Երկեր, 1955: